Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ճակատենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Դասվար» (8 դասաժամ) «Հայոց լեզու և գրականություն» (11դասաժամ), «Աշխարհագրություն» (4,5 դասաժամ), «Պատմություն» (6,5դասաժամ), «ՀԵՊ» (1,5 դասաժամ), «Հասարակագիտություն» (1,5 դասաժամ), «Ինֆորմատիկա» (2,5 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (6,5 դասաժամ) ուսուցչի և «Զինղեկի» (0,5 հաստիքի) թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. Սեպտեմբերի 19-ին՝ ժամը 14:00-ին**, **«Ճակատենի հիմնական դպրոց»** ՊՈԱԿ-ում, հասցե՝ Սյունիքի մարզ, Կապան համայնք, Ճակատենի բնակավայր, թաղ. 1, շենք 1: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 06-21-38 հեռախոսահամարով: